

ՀԱՐԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԻՆԸ.

Տարեկան գինն է 5 ռուբլի (փոստի ծախսով): Օտարաբազա-
բացի բաժանորդները պիտի գինեն այս հասցեով. Во Редакцію Армянскаго Газеты „Мшакко“.
Քիֆիսում կարելի է ստորագրվել խմբագրատան մէջ (սրբու-
նու պոռն) և պ. Գալուստիանցի խանութում:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ.

Մասնաւոր յայտարարութիւն տալի տուողը պիտի վճարէ 10
հասարակ տառի համար 1 կոպէկ արծաթ: Յայտարարութիւններ
տպւում են չայերէն, ռուսերէն, վրացերէն, ճրանխարէն, գերմա-
ներէն և ֆուրքերէն:

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԿԱՎՈՒԹՅՈՒՆ

Ինչպէս ազատ վեճի հացի չարչինե-
րից, — Եւրօքին տեսութիւն: Աւետարան
դատարան: Կովկասի մեղուաբուծութիւնը: Ներ-
քին լուրեր: — Արտաքին տեսութիւն: Ֆրան-
սիա: Ամերիկա: Կրօն և եկեղեցականները: Նա-
մակ Պարսկաստանից: — Եւրոպայի շուկան: Տե-
ղեկացոյց: — Ազգ: — Աւետարան: — Յայտարա-
րութիւններ: — Բանասիրական: — Նամակ
Համախոս:

Ի՞՞՞՞՞՞՞ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՐՈՂ ԵՆՔ ԱԶԱՏԱՅԵԼ
ՀԱՅԻ ԶԱՐԳԻՆԵՐԻՑ

«Մշակի» առաջնորդող յօդվածը 15-րդ
համարում, ցոյց է տալիս հացի թանկութեան
պատճառները, փրարներով այդ թանկութիւնը
չարչինելին և շատ իրաւացի նկատում է, որ
բողոքային վարչութեան կողմից առաջարկված
միջոցները անցաւոր են և ժամանակաւոր:

Փողի, շրջական կապիտալի բացակայութիւնը
հացի արդիւնաբերողների ձեռքում, — է այն
միակ պատճառը, որ հացը անցնում է արդիւ-
նաբերողների ձեռքից չարչինելի ձեռքը:

Հացի արդիւնաբերողները մեղանում հա-
մարում են երկու հասարակական դաս. կալ-
վածատէրերը և շինականները: Երկուսն էլ
գրութեան վրա և նրանց գրութիւնը էժան
կրիլիստի միջոցով բարձրելու վրա, շատ ան-
գամ խօսված է եկել «Մշակի» մէջ:

Աղագծատէրերի գլուխը ճորտերի ազա-
տութեանց յետոյ նորոգելու շատ նախանշիլ է
երևում շրջական դասակարգի կողմից:

Բաւժոյն ձորտերի սովորած աշխատանքի
ժամանակ կալվածատէրերը կարողութիւն չու-
նէին մեծ շրջական գումարի, բայց ձորտերի
ազատութեանց յետոյ, — փոխվում են անտե-

ութեան պայմանները և յանկարծ պահանջ է
լիցքվում մեծ շրջական կապիտալի մշակե-
լին վարձելու համար: Եւրոպական է, որ
կալվածատէրերը ստիպված են լինում զիմը
համաւոր անձանց և փոխ առնել նրանցից
գումարներ մեծ տոկոսերով և շատ անգամ
այն պայմանով, որ պարտքը վճարելու ժա-
մանակ յետ տան ոչ թէ փողով, այլ հացով...
ահա այն պատճառներից մէկը, որ հացը անց-
նում է կալվածատէրերի ձեռքից չարչինելի
ձեռքը:

Կապիտալի ազատվելը մենք չարչինելից, հացի
և առաջին հարկաւորութեան ուրիշ արդիւն-
ների մեղաւորութեանց, — կազմելով ընկերու-
թիւններ, որը հարկաւոր ժամանակին կօդեն
թէ կալվածատէրերին թէ շինականներին, փոխ
տալով նրանց գումարներ և կը նպաստեն հում
արդիւնների ծախելուն արդիւնաբերողների
ձեռքից անմիջապէս ապագողների ձեռքը, —
առանց չարչինելի միջնորդութեան:

Պորձներ քննել այդ տեսակ ընկերութիւն-
ների կազմակերպութիւնը և գործունէութիւնը,
որքան կը ներէ մեզ լուրջական յօդվածի բն-
դարձակութիւնը:

Եւրոպական ընկերութիւնները կազմվում են
կամ՝ ա) արդիւնաբերող անգամներից,
բ) փառաւոր անձներից, կամ վերջապէս գ)
ընկերակցութեանը երկուսի մէջ:

Ընկերութեան շրջական դասակարգի գո-
յանում է կամ անգամների տուրքից, կամ
փոխ է առնվում մի որ և է կրկնաթիւ հիմ
նարկութեանց, կամ վերջապէս կազմվում է
բաժանորդական սկզբունքի վրա:
Եւրոպական ունեւոր գլխու որ նպատակը, —

առն են հաւատալ և պատուել, Ինչպէս լսել եմ
մեր ծերունիներից այս բաները Համարձուսեանցի
ժամին, աչքովս էլ տեսայ 1862 թուականից սկսած
մինչև հիմա, Ինչպէս երևում էր գործերի հան-
գամանքից, Համարձուսեանցի առնին չէր յայտ-
նում իրա օրտի ծածուկ խորհուրդը, միայն մի
քանիսն էին, որերին այնպէս էր գրաւել, որ դա-
ռել էին մի սիրտ մի հոգի: Այդ գրաւված ան-
ձները փառաւորանց տոմար հասակաւոր մարդիկն
էին և նորանց ազգականները: Գործից աղատ
ժամանակները և կիրառի օրերը Համարձուսեանցի
տանում էր իրա հետ իւր խորհրդակից մարդկանց
քաղաքից դուրս դաշտումը, կամ սարերում ա-
ռանձին տեղ և սկսում էր նրանց, որերի հետ և
իմ ազգականներից ոմանց, բայց անել իրա սրտի
խորհուրդը և համոզել, որ եթէ հայոց կրօնը թող-
նենք և դառնանք լուստերադաւան, այն ժամա-
նակ մեծ օգնութիւններ կտանանք Լուստերադա-
ւան ազգից, և փոքր առ փոքր գրաւելով հայ ազ-
գից զէպի մեղ, կատարենք մեր ժողովուրդը և կը
լինենք մի ընտրուած ազգ: Գրանք էլ այսպէս
գրաւված լինելով Համարձուսեանցի խօսքերով,
ընդունում են, բայց պահում են իրանց մէջ իր
խոտտվանք, մինչև որ ժամանակին կարողանան
յայտնել: Այդ խորհուրդը մեծ օգնութիւններ կըս-
տանաւ լուստերադաւան ազգիցից, տարացնում
է այդ մարդկանց օրտերը, գրանք էլ խօսք են տա-
լիս Համարձուսեանցին, միանում են նորա հետ:
Եւ էլ դրում է առանձին առանձին նամակնե-
րով զանազան տեղեր լուստերադաւան եկեղեցի-
ներին, և խորհուրդ հարցնելով նրանցից թէ, ար-
դեօք, ես այս բանը որ սկսեմ կարող եմ առաջ
տանել թէ ոչ, և պատասխան է ստանում նրան-
ցից, որ եթէ կարողանաք այդ բանը առաջ տա-

պատվել չարչինելից, — ընկերութիւնը պիտի
միայնե իրան մէջ երկու գործողութիւն
կրկնական և առեւտրական: Ընկերութեան
առեւտրական գործունէութիւնը բաղկանում է
հետեւեպէ մէջ:

Այն տեղերում, որտեղ ծախվում են թէ
հացը թէ ուրիշ գիւղական արդիւնքները, —
առնմն սովորաբար մեծ քաղաքներում, — հիմ-
նովում են պահահասներ (սկրապին) մագա-
զին), ուր գիւղական արդիւնաբերողները բն-
րում են իրանց արդիւնքները ծախելու հա-
մար: Իրանց արդիւնքը պահեստ հասցնելու
ցանկացողներին ընկերութիւնը տալիս է փո-
խառութեամբ մի յայտնի գումար, որ հար-
կաւոր է արդիւնաբերութեան տեղից հասցնել
արդիւնքը պահեստի մէջ:

Արդիւնքը կարող է հասցրած լինել պա-
հեստների մէջ զանազան պայմաններով ծախ-
վելու համար: Այդ պայմանները ընկերու-
թիւնը կարող է կամ ընդունել կամ ոչ: Օրի-
նակի համար մի քանիսը չեն կամենում ծախել
իրանց հացը յայտնի գինը պակաս, միւսները
յայնձնում են ընկերութեան կամքին գնի մա-
սին որոշելու: Արդեք է պատահել և այսպէս
արդիւնքի տէրը կամենում է մի քանի ժա-
մանակ պահել իր մթերքը պահեստի մէջ, —
յակ փողերը նրան հարկաւոր են: այն ժամա-
նակ ընկերութիւնը փոխ է տալիս նրան մի
յայտնի գումար, իսկ նրա մթերքը մնում է
պահեստի մէջ մինչև նշանակված պայմանա-
ժամը: Այդ տեսակ զէպերում, կը արդիւ-
նաբերողի մթերքը պահեստի մէջ է մնում, —
ընկերութիւնը պահանջում է սկրապին պա-
հեստի վարձը: Բացի սորանից, արդիւնքը ծա-

խելուց յետոյ, ընկերութիւնը առնում է տի-
լովից մի յայտնի պրօցենտ գործակատա-
րութեան համար: Այդ պրօցենտի մեծու-
թեան որոշումը ներկայացնում է սկզբում քիչ
թէ շատ գումարութիւն, բայց սկզբից նշա-
նակում են խիստանց փոքր ինչ բարձր պրօ-
ցենտ, մինչև որ փորձը չը ցոյց տալ խիստանի
յայտը:

Բացի փոխ առած գործունէութեանց, բն-
կերութիւնը կարող է դառնալ յայտնի գոր-
ծարանների գործակատար և կարող է նը-
պաստել գիւղատնտեսական մեքենաների օտար
կրիլից բերել տալուն, ընկերութիւնը կարող է
նոյնպէս կապարել յանձն առնել, և այլն:

Ընկերութեան կրկնական գործունէու-
թիւնը, ինչպէս մենք տեսանք, պարունակ-
վում է նորանում, որ ընկերութիւնը փոխ է
տալիս յայտնի գումարներ սպարներ տեղա-
փոխելու համար, բացի սոյանից նա գումար
փոխ է տալիս արդիւնաբերողին իրան ծախ-
վու նպատակով հասցրած մթերքի գրաւա-
կանով, և այն փոխ առած գումարը ի հարկէ
է անցնում մթերքի արժողութեանից վաճա-
ռանցի վրա:

Մթերքը ծախելուց յետոյ ընկերութիւնը
դուրս է գալիս այն գումարը, որ առած էր
արդիւնաբերողին մթերքը տեղափոխելու հա-
մար, այն գումարը որ սպարների գրաւականով
փոխ էր առած, այդ գումարից շահը, յայտնի
շահը գործակատարութեան համար, և վարձ
պահեստի մէջ սպարները պահելու համար:

Բացի կրկնիցից գրաւականով, թոյլ է արը-
վում և անձնական կրկնիցից այն անձանց, որը
ընկերութեան միջնորդութեամբ առեւտուր են

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ՀԱՄԱՐՈՒՆՑ

Եւ լուստերադաւան Հայ եմ, ինքս էլ Համախոսեցի,
ուստի կամենում եմ Համախոսեցի լուստերադաւան
եղբայրներին վերաբերութեամբ ասել մի քանի
խօսք. բայց մինչև դորանց վերայ խօսելը, առաջ
յայտնեմ, թէ ես ինչպէս եմ ընդունել այդ դաւա-
նութիւնը: Եւ մեծ հաւանութեամբ կամ ժամանակա-
նից չեմ ընդունել, ես համարեա էլ եմ անպիա-
հաս, որովհետեւ տղայական մտքերը ինձ չուտ էին
խարում, ինչպէս իմ ծնողներս խօսքերը խարել
են ինձ և քաղցրաբոյր զէպի կրօնափոխութիւնը:
Իրանք, այսինքն իմ ծնողները, առաջուց գրա-
վում էին ընդունել, ինձ էլ խառնել իրանց
հետ:

Հիմա ասեմ, թէ ով է էլիս դուրս սկզբնապատ-
ճաւոր, Համախոսեցի Ս. Համարձուսեանցի, որ իրա
ջանք հասակում զնայած է լինում Գերմանիա,
այնտեղ սովորում է գերմանացւոց լեզուն և կրօ-
նական աւետարանները, և մի քանի տարիներ
ից յետոյ կրկին գալիս է Համախոս, բայց ախտս
որ թիւր չգիտեմ, Եւ որովհետեւ փոքր ի շատէ
հայերէն լեզուն էր գիտէր, նա սկսում է մի հայոց
ուսումնարան բանալ, ըստ տարի գրանից առաջ,
և և կիրակի օրերը կանչում է իրա մօտ մի քանի
հայեր, սկսում է նրանց հետ կրօնական քաղցր
խօսակցութիւններ անել, Կամաց կամաց այդ ժո-
ղով մարդիկը շնորհում են իրանց հետ բերե-
լով իրանց բարեկամներին և ազգականներին, որ
լսեն նորա քարոզութիւնը: Վերջապէս, այնպէս է
գրաւում այդ մարդկանց սրտերը, որ նորան սկը-

րներ եկեղեցու ծոցից դուրս գալու պատճառով,
ուրախութեամբ սկսում են հեռանալ: Լուստերա-
դաւան գաղութները մեծ ու պատիկ ընդ առնեն
լինում են 327 հոգի: Այնպէս էլ խօսվում է մեր
այս ժողովրդի մէջ, որ ամէն մի մարդ աշխատէ
իրա ազգականներին և բարեկամներին գրաւել
կամ հեռացնել նրանց Հայոց եկեղեցիից, և կամ
նրանց հետ վստել: Այսպէս բաժանված մնում են
մի քանի տարի, դրանց թուումն էլ լինում է իմ
հայրը, Նրանք խնդրել են տալիս որտեղ հարկն
է, որ իրանց լուստերական քառանայ տան, իրանց
օրէնքները կատարելու համար: Քանի անգամ
կրկնում են խնդրելը, բայց պատասխան ստանալը
բաւում է մինչև 4 տարի: Այս 4 տարվայ մէջ
մոռնողներին առանց սրտովեան և առանց քա-
հանայի թաղում են Համարձուսեանցի ձեռքով:
Ճուտանները մնում են առանց մկրտութեան և երի-
տասարդ տղաները կամ ազգիկները մնում են անպը-
տակ: Վերջապէս նորադարձները հասնում են իրանց
նպատակին: Գալիս է Համախոս Մօսկովայի կոն-
սիստորալից 1866 թ. օգոստ. 22-ին լուստերա-
դաւան վ. Կարլ Բլումն, նա հարց ու փորձ է ա-
նում, թէ ինչ մտքով էք կամենում լուստերադա-
ւան դառնալ: Դրանք էլ ծածկելով իրանց սրտերի
զաղանի խորհուրդը, առ երես իրանց սէրը և ցան-
կութիւնը ցոյց են տալիս զէպի այդ նոր կրօնքը:
Վերջապէս ընդունվում են լուստերական եկեղեցու
ծոցը, դրանց հետ էլ և իմ ծնողները, ինձ էլ իրանց
հետ խառնելով: Կատարվում է արանց ցանկութիւնը
առ ժամանակից յետոյ կրկին վերադառնում է
վ. Կարլ Բլումը Մօսկով: Այդ ժամանակվանից
կրկին սկսվում են արանց ժողովները, ոչ թէ եկե-
ղեցում, որ չկար, այլ մէկ օր սրա տանը, միւս օր
մի ուրիշ տանը հաւաքվելով: Ս. Համարձու-

